

Ծրագրի եռամսյակային հաշվետվություն

Միջոցառման անվանումը՝ *«Տեսողության խնդիրներ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնում»*

Համառոտ բովանդակությունը՝ *Տեսողության խնդիրներ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնման ծառայությունների տրամադրում անկախ կյանքի կենտրոնում*

Հաշվետու ժամանակաշրջանը - **01.02-31.03.2021**

Իրականացված գործողություններ					
	Գործառնությունների նկարագիր	Ակնկալվող արդյունքները	Գնահատման չափանիշները և հիմնավորող փաստաթղթերը	Փաստացի մատուցած ծառայությունները	Մեկնաբանություն
1	Բազմամասնագիտական թիմի կողմից ծրագրի շահառուների կարիքների և կարողությունների գնահատման կազմակերպում և դրա հիման վրա սոցիալ-վերականգնողական անհատական ծրագրի կազմում և մասնագետների պարապմունքների և ծառայությունների նախանշում	Անհատական ծրագրերի իրականացման արդյունքում կարողությունների և անկախ կյանքի հմտությունների աճ: Գնահատումն իրականացվում է ըստ ՖՄԴ գործիքակազմի	1. Սոցիալ վերականգնողական անհատական ծրագրեր ձևաչափը / հավելված 1/ 2. Մասնագետների մոդուլներ / հավելված 2/	Կարիքների գնահատում	Գործառնություններն իրականացվել են ինչպես կենտրոնի տարածքում, այնպես էլ կենտրոնի տարածքից դուրս, այդ թվում հեռավար
2	Չտեսնող անանց ինքնուրույն և անվտանգ տեղաշարժվելու, ինքնուրույն կենցաղավարման հմտություններ ուսուցանելու և անկախ կյանքի հմտությունների զարգացման նպատակով ծրագրերի իրականացում՝ սոցիալ-հոգեբանական վերակազմմանն ուղղված սեմինարների, ֆիզիկական պատրաստվածության ուղղված միջոցառումների, համակարգչային հատուկ	Ծառայությունների տրամադրում ցերեկային կենտրոնում	3. Այցելությունների էլեկտրոնային գրանցամատյան /հավելված 3/ 4. Լուսանկարներ /տեղադրված են հաշվետվության մեջ/ 5. ահառումների Ցուցակը՝	Ծառայությունների մատուցում՝ պայմանագրով սահմանված ծառայությունների և դրա ծավալին համապատասխան	Գործառնություններն իրականացվել են ինչպես կենտրոնի տարածքում, այնպես էլ կենտրոնի տարածքից

	ծրագրերի, զգայական ոլորտի զարգացման նպատակով մասնագիտական աջակցության միջոցով		համաձայն Աղյուսակ 1-ի		դուրս, այդ թվում հեռավար
3	Ծրագրի շահառուների ընտանիքների անդամների՝ հետ սոցիալ-հոգեբանական աշխատանք ընտանիքի	Մեմինարների, քննարկումների և հանդիպումների կազմակերպում՝ նոր գիտելիքների տրամադրման, կարծրատիպերի վերացման և վախերը հաղթահարման նպատակով . որը կնպաստի շահառուների անկախ կյանքի հմտությունների զարգացմանը			Գործառույթներն իրականացվել են ինչպես կենտրոնի տարածքում, այնպես էլ կենտրոնի տարածքից դուրս, այդ թվում հեռավար

Ընդամենը շահառուներ՝ 27

Ազդեցությունը՝

1. Անկախ կյանքի գաղափարի սերմանում շահառուների և նրանց ընտանիքների անդամների շրջանում,
2. Ինքնուրույն կյանք վարելու հմտությունների ձեռքբերում
3. Շուրջօրյա խնամքի հաստատություններում հայտնվելու վտանգի նվազում

ԱՆՁԻ

ՄՈՑԻԱԼ-ՎԵՐԱԿԱՆՔԼՈՂԱԿԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Մշակման օրը	
Համարը N	

1. Ա.Ա.Հ
2. Ծնյան օր, ամիս տարի
3. Անձնագրային տվյալներ
4. Սոցիալական կարգավիճակ
5. Ախտորոշում

1. Սոցիալ- հոգեբանական ծառայություններ

	<i>Ծառայության / գործողության տեսակը</i>	<i>Իրականացնող մասնագետը</i>	<i>Նշումներ (եթե առկա են)</i>

2. Կարողությունների և հմտությունների զարգացմանն ուղղված ծառայություններ

	<i>Ծառայության / գործողության տեսակը</i>	<i>Իրականացնող մասնագետը</i>	<i>Նշումներ (եթե առկա են)</i>

3. Անկախ կյանքի խթանմանն ուղղված այլ ծառայություններ

	<i>Ծառայության / գործողության տեսակը</i>	<i>Իրականացնող մասնագետը</i>	<i>Նշումներ (եթե առկա են)</i>

ՄՈՂՈՒՆ

Լիարժեք կյանք ՀԿ-ի կողմից իրականացվող «Տեսողության խնդիրներ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնում» ծրագրի շրջանակներում անկախ կյանքի հմտությունների տրամադրման **Էրգոթերապևտիկ ծառայություններ**

Սույն մոդուլի շրջանակներում ծրագրի մասնակիցներին տրամադրվելու են՝

1. անկախ կյանքի հմտությունները ուսուցում
2. ճանաչողական ֆունկցիայի, շոշափելիքի, համի, հոտոտելիքի զգայարանների և դրանց արդյունավետ գործածման հմտությունների զարգացում
3. կենցաղավարման հմտություններ
4. ինքնաապասարկման հմտություններ
5. մանր և խոշոր մոտորիկայի զարգացում
6. էրգոթերապևտիկ այլ աշխատանքներ

Հ/Հ	Զարգացման ոլորտ	Գործողություն/պարապմունք	Պարապմունքների քանակ	Ժամաքանակ	Կարիքներ և հավելյալ մեկնաբանություն
1	Ծանոթության հաստատում ծրագրի մասնակցի հետ: Անձնային դիտարկում: Կարիքի գնահատում հիմնված այցելուակենտրոն մոտեցման վրա:	<ul style="list-style-type: none"> • Տեսական մաս, զրույց-քննարկում. ծրագրի մասնակցի, հիմնախնդիրների վեր հանում, հարց ու պատասխան հիմնված անձի ցանկությունների, նախասպիրությունների, կարիքի, կարողությունների վրա: 	1	1 ժամ	Աշխատանքները կատարվում են շենքի ներսում:
2	Ծրագրի մասնակցի կարողությունների և հմտությունների ֆունկցիոնալության գնահատում:	<ul style="list-style-type: none"> • Խոշոր մոտորիկա • Մանր մոտորիկա • Տարածական կողմնորոշման հմտություններ • Տեղեկացվածություն շրջապատի վերաբերյալ • Առօրյա կենցաղավարության հմտություններ • Տարածական կողմնորոշման հմտություններ • Զգայական ոլորտի հմտություններ • Ճանաչողական հմտություններ • Սոցիալական և հուզական ճանաչողություն 	2	1 ժամ	

		<ul style="list-style-type: none"> • Խոսքի հմտություններ 			
3	Զգայական ոլորտի հմտությունների գնահատում և զարգացում	<ul style="list-style-type: none"> • Աշխատանքներ երկրաչափական պատկերներով, հուլունքներով, թելերով, կոճակներով, ընդդեմով և այլ մանր առարկաներով • Հոտով, համով կողմնորոշման հմտությունների զարգացում, օր. քաղցրավենիքի, այլ ուտեստների համը փորձելը կամ ծաղիկների, օձանեղիքի բույրը զգալը • Շոշափելիքը զարգացնող վարժություններ օր. առարկաների ձևիչափսի, պատրաստված նյութի որոշմանվերաբերյալ վարժություններ և/կամ որևէ իրի, առարկայի նյութակազմվածքը (տեքստուրան) շոշափելը և շոշափելով զգալը, • Մարմնի դիրքը տարածության մեջ (նստած, կանգնած, ուղղահայաց, հորիզոնական) զգալուն ուղղված վարժություններ, 	8	1 ժամ	Հարցաթերթերի պատրաստում և հարցման անցկացում: Վարժությունների իրականացում:
4	Մանր մոտորիկայի զարգացում	<ul style="list-style-type: none"> • առարկաները գործածելուն առնչվող համակարգված գործողություններ կատարելը, • առարկաները վերցնելը, գործածելը և բաց թողնելը ձեռքի, մատների կամ մեծ մատի օգնությամբ, ինչպես օրինակ՝ սեղանից մետաղադրամներ վերցնելը կամ բռնակը պտտելը: • Մատնային մարմնամարզություն • Աշխատանք մատներով • Խաղեր կապիչներով և կոճակներով • Աշխատանք գործվածքներով, թելով, տարբեր տեսակի հյուսվածքներով • Մակետների, երկրաչափական պատկերների, շենքերի, շինությունների ճանաչում/պատկերացում շոշափելիքի զգայության միջոցով • Ձեռքի ինքնամերսում • Մոզաիկայով խաղեր • Կառուցողական խաղեր 	2	1 ժամ	Տարբեր նյութերից պատրաստված առարկաներ: Լսողական ընկալման զարգացումը անկախ կենցաղավարման և տարածական կողմնորոշման կարևորագույն բաղադրիչներից է: Այս պարապմունքների ժամանակ
5	Ճանաչողական	<ul style="list-style-type: none"> • Մրգերի, բանջարեղենի ճանաչում 	2	40 րոպե	

	հմտությունների զարգացում	իրարից տարբերակում <ul style="list-style-type: none"> Թվերի, դրամի ճանաչում տարբերակում և օգտագործում 			
6	Ինքնասպասարկման հմտությունների զարգացում	<ul style="list-style-type: none"> Լվացվել լոզանք ընդունել՝ սեփական մարմինն ամբողջությամբ կամ մարմնի որոշ մասերը լվանալը և չորացնելը Հագնվելը հագուստը և կոշիկները հագնելու և հանելու հետ կապված համակարգված գործողություններն ու առաջադրանքները հերթականությամբ կատարելը, կլիմայական ու սոցիալական պայմաններին հետևելը, ինչպես օրինակ՝ շապիկներ, կիսաշրջագգեստներ, բլուզներ, վարտիքներ, ներքնագգեստ, գուգագուլպաներ, գլխարկներ, ձեռնոցներ, վերարկուներ, կոշիկներ և գուլպաներ, երկարաճիտ կոշիկներ, հողաթափեր և տնային մաշիկներ հագնելը, հարմարեցնելը և հանելը: Ուտել Ուտելու պահանջ զգալը և մատուցված սննդամթերքը ուտելուն ուղղված համակարգված առաջադրանքներ և գործողություններ կատարելը, այն բերանին մոտեցնելը, տվյալ մշակությամբ ընդունված եղանակով ուտելը, սննդամթերքը մասերի բաժանելը կամ կտրելը, շշեր և թիթեղամաններ բացելը, սեղանի սպասք օգտագործելը, արագ սնվելը, ճաշկերույթի կամ ճաշի մասնակցելը: Խմելը Խմելու կարիք զգալը և ըմպելիքով տարան վերցնելը, այն բերանին մոտեցնելը և ըմպելիքը տվյալ մշակությամբ ընդունված եղանակով խմելը, խմելու համար նախատեսված հեղուկներ խառնելը, ժամանակ առ ժամանակ խառնելը և լցնելը, շշեր և թիթեղամաններ բացելը, ձողիկով խմելը կամ հոսող ջուր խմելը՝ ծորակից կամ աղբյուրից : 	18	30 րոպե	Պարապմունների քանակը և տևողությունը կարել է ն փոխվել ըստ ծրագրի մասնակցի կարողությունների և գնահատման ընթացքում ծառայությունների ծավալի որոշման:
7	Կենցաղավարման հմտությունների	<ul style="list-style-type: none"> Տնային գործեր անելը՝ տանը մաքրություն անելը, հագուստներ լվանալը և 	15	30 րոպե	Պարապմունների քանակը և տևողությունը կարել է ն

	<p>զորացնելը, սպասքը մաքրելը, կենցաղային տեխնիկա օգտագործելը, աղբը թափելը, նչպես օրինակ՝ խոհանոցի սեղանները սրբելը, կենցաղայինաղբը հավաքելը և թափելը, սենյակները, պատի պահարանները և դարակները կարգի բերելը, կոշիկները մաքրելը, փոշեկուլներ և խոզանակներ օգտագործելը:</p> <ul style="list-style-type: none"> • Կերակուր պատրաստելը՝ սեփական անձի կամ այլ անձանց համար պարզ կամ բարդ կերակուրների պատրաստումը ծրագրելը, կազմակերպելը, դրանք պատրաստելը և մատուցելը, ինչպես օրինակ՝ ուտելու համար պիտանի սննդամթերքն ուտելիք ընտրելը, ուտեստ պատրաստելու համար բաղադրամասերն իրարմիացնելը, էլեկտրաէներգիայի միջոցով կերակուր, սառը ուտեստն ըմպելիք պատրաստելը, ինչպես նաև սննդամթերքը մատուցելը: • Պարզ կերակուր պատրաստել օր.՝ քիչ բաղադրամաս ունեցող, պատրաստման և մատուցման պարզ եղանակներ պահանջող կերակուրների պատրաստումը կազմակերպելը, դրանք եփելը և մատուցելը, ինչպես օրինակ՝ թեթև ուտեստ կամ կերակուր պատրաստելը դրանց պարզ գործողություններ կատարելը կտրելու, տրորելու, կեղևահանելու, եփելու և տաքացնելու միջոցով: • Բաղադրյալ կերակուր պատրաստել՝ շատ բաղադրամասեր ունեցող պատրաստման և մատուցման բարդ եղանակներ պահանջող կերակուրների պատրաստումը ծրագրելը, կազմակերպելը, դրանք եփելը և մատուցելը համապատասխան գործողություններ կատարելով՝ սննդամթերքի բաղադրամասեր ձևափոխել, կեղևահանել, բարակ շերտերով կտրտել, խմորել: 				<p>փոխվել՝ ըստ ծրագրի մասնակցի կարողությունների և գնահատման ընթացքում ծառայությունների ծավալի որոշման:</p>
8	Խոհանոցային անվտանգ	<ul style="list-style-type: none"> • Սուր, կտրող, ծակող գործիքներից 	10	40 րոպե	

	գործունեության կանոնների ուսուցանում	<p>(դանակ/մկրատ/քերիչ) անվտանգ օգտվելու կանոններ:</p> <ul style="list-style-type: none"> • Հատուկ արժություններ՝ ուղղված մթերքը լվանալու, անվտանգ կեղևազրկելու, կտրատելու, տապակելու, եփելու հետ կապված: • Հստակ անվտանգության կանոնների կիրառում՝ գազօջախից, միկրոալիքային վառարանից անվտանգ օգտվելու համար խուսափելով այրվածքներից և այլ վնասվածքներից: • Ռետինե ձեռնոցների կիրառում խոհանոցային տաք պարագաներ (թավա, սրճեփ) անվտանգ օգտագործելիս: • Մարմնի մասերը որպես կողմնորոշիչ օգտագործելու հմտությունների կիրառում: • Էլեկտրական թեյնիկից, սրճեփից օգտվելու անվտանգ կանոններ ձայնային կողմնորոշիչներով պայմանավորված: 			
9	Խոհանոցային օժանդակ պարագաների կիրառում	<ul style="list-style-type: none"> • Հարմարեցված ռետինե եզրով դանակի կիրառում: • Միջնամատը ֆիքսող հարմարանքի կիրառում, որը պատնեշ է հանդիսանում մթերքը կտրատելու ժամանակ, վնասվածքից խուսափելու և մթերքը ճիշտ կտրատելու նպատակով: • Չափիչ գդալների կիրառումը, որը նախատեսված է համեմունքների, աղ/պղպեղ, ճշգրիտ քանակով լցնելու համար: • Ձայնային կրակայրիչի կիրառում: 	4	40 րոպե	
10	Կարծրատիպերի կոտրում	<ul style="list-style-type: none"> • Նախորդ նյութի կրկնություն • շենք բերող և շենքից դուրս տանող երկրորդ/երրորդ/չորրորդ՝ այլընտրանքային մուտքերի ուսուցանում • կարծրատիպերի կոտրման և հաղորդակցման հմտությունների հաստատման գործողություններ. • Խանութից միայնակ որևէ բան գնելու 	3	1.5 x3=4.5 ժամ	Այս ընթացքում անհրաժեշտ է չտեսնողին հորդորել, որ անպայման զգուշացնի, որ ինքը չի տեսնում Անընդհատ գործածի «ներողություն» և «շնորհակալություն»

	<p>քաջալերում</p> <ul style="list-style-type: none"> • Կանգառում ավտոբուսի համար հարցնելու աջակցության խնդրանք • Ավտոբուսում «այսինչ» կանգառ հասնելուն պես զգուշացման խնդրանք <p>Գումարը փոխանցելու խնդրանք և այլն:</p>			կախարդական բառերը
--	---	--	--	-------------------

Մ Ո Ղ Ո Ւ Լ

Լիարժեք կյանք ՀԿ-ի կողմից իրականացվող «Տեսողության խնդիրներ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնում» ծրագրի շրջանակներում տարածական կողմնորոշման և անկախ կյանքի հմտությունների տրամադրման **տիֆլումանկավարժական (տարածական կողմնորոշման)** ծառայությունների

Սույն մոդուլի շրջանակներում նախատեսվում է ծրագրի մասնակիցներին տրամադրել՝

1. անկախ կյանքի հմտությունների ուսուցում
2. լսողական ընկալման, շոշափելիքի, համի, հոտոտելիքի զգայարանների և դրանց արդյունավետ գործածման հմտությունների զարգացում
3. սպիտակ ձեռնափայտի միջոցով տեղաշարժման ուսուցում
4. հատուկ մանկավարժական այլ աշխատանքներ

<i>Հ/Հ</i>	<i>Զարգացման ոլորտ</i>	<i>Գործողություն/պարապմունք</i>	<i>Պարապմունքների քանակ</i>	<i>Ժամաքանակ</i>	<i>Կարիքներ և հավելյալ մեկնաբանություններ</i>
1	Ընդհանուր ծանոթացում, պատկերացումներ, կարծրատիպերի կոտրում	Տեսական մաս, զրույց-քննարկում «Անկախ կենսակերպ. Տարածական կողմնորոշում. թե ինչպես սկսեցին անկախաբար տեղաշարժվել չտեսնողները և թե ինչու է կարևոր անկախ կյանքը չտեսնողների համար» թեմայով. հարց ու պատասխան	1	1,5 ժամ	Աշխատանքները կատարվում են շենքի ներսում:
2	Ծրագրի մասնակցի անկախ կենցաղավարման, ներկա կարողությունների և հմտությունների, ֆունկցիոնալության գնահատում	<ul style="list-style-type: none"> • Խոշոր մոտորիկա • Մանր մոտորիկա • Տարածական ճանաչողություն • Տեղեկացվածություն շրջապատի վերաբերյալ • Առօրյա կենցաղավարության հմտություններ • Տարածական կողմնորոշման հմտություններ • Զգայական ճանաչողություն • Ճանաչողական հմտություններ • Սոցիալական և հուզական ճանաչողություն 	1	1,5 ժամ	Զրույց, փոքրիկ հարցումներ: Աշխատանքները կատարվում են շենքի ներսում::

		<ul style="list-style-type: none"> • Ժամանակի ճանաչողություն • Խոսքի հմտություններ • Փոխհատուցման վերաբերյալ ակադեմիական հմտություններ 			
3	Տեսողական ֆունկցիոնալության գնահատում	<ul style="list-style-type: none"> • Ինչպես է անձը գնահատում իր տեսողությունը • Ինչպես է գործածվում մնացորդային տեսողությունը (առկայության դեպքում) • Ինչպես է օգնում անձին լուսավորությունը • Գունագգայության որոշում • Օգնում է արդյոք գունային կոնտրաստը անձին • Առարկաների նկատմամբ ուշադրության առկայություն • Աչքերի շարժումների կառավարում • Առարկաների նկարագրում • Գործողությունների և առարկաների հայտնաբերման մանրամասների նկարագրություն • Նկարներում առկա մանրամասների նկարագրում • Օրինաչափությունների, թվերի և բառերի հայտնաբերում կամ զգայություն 	1	1,5 ժամ	<p>Հարցաթերթերի պատրաստում և հարցման անցկացում:</p> <p>Վարժությունների իրականացում:</p> <p>Այս գնահատումից հետո կարելի է պլանավորել մնացորդային տեսողություն ունեցող անձանց տարածական կողմնորոշման հմտությունների տրամադրման աշխատանքները՝ ուշադրություն դարձնելով հետևյալ ասպեկտներին՝</p> <ul style="list-style-type: none"> • տեսողության խթանում, • տեսողության արդյունավետություն, • հարմարվողականություն շրջապատող միջավայրին:
4	Լսողական ընկալման որոշում և զարգացում	<ul style="list-style-type: none"> • Տարբեր առարկաների՝ ինչ նյութից պատրաստված լինելու որոշում դրա արձակած ձայնով • Առարկայի հեռավորության և դրա հայտնաբերման որոշում ձայնի միջոցով (օդում) • Առարկայի ընկնելուց հետո ձայնի միջոցով դրա ընկած տեղի հայտնաբերում (մոտավորից հասնել գրեթե ճշգրիտ հայտնաբերման) • Չայնային տեղորոշմամբ (էխոլոկացիա) առարկաների հայտնաբերում • Չայնագրված ձայների որոշում 	2	1.5x2 =3 ժամ	<p>Տարբեր նյութերից պատրաստված առարկաներ:</p> <p>Լսողական ընկալման զարգացումը անկախ կենցաղավարման և տարածական կողմնորոշման կարևորագույն բաղադրիչներից է: Այս պարապմունքների</p>

		<ul style="list-style-type: none"> Աղմուկի մեջ կոնկրետ ձայնի աղբյուրը գտնելուն ուղղված վարժություններ 			<p>Ժամանակ տեսողության խանգարումներ ունեցող անձինք կսովորեն</p> <ul style="list-style-type: none"> ինչպես օգտվել ձայնային տեղեկատվությունից, ինչպես տարբերակել պիտանի ձայները և ինչպես ուշադրություն չդարձնել ոչ պիտանի ձայներին տարածության մեջ կողմնորոշվելիս, ինչպես պետք է կողմնորոշվել աղմուկի մեջ, ինչպես գտնել աղմուկի մեջ օգտակար ձայներ և կողմնորոշվել, տարբերակել ձայները, որպեսզի ձեռնափայտով տեղաշարժվելիս կարիք չունենան ձեռքով ուսումնասիրելու խոչընդոտները (քանի որ այդ գործողությունը կարող է վտանգ պարունակել), այլ ձեռնափայտով ուսումնասիրելով՝ պատկերացում կազմել խոչընդոտների մասին (աշխատանքները կատարվում են շենքի ներսում)
5	Զգայական ոլորտի զարգացում	<ul style="list-style-type: none"> Աշխատանքներ հուլունքներով, թելերով, կոճակներով, ընդեղենով և այլ մանր առարկաներով 	2	1.5x2 =3 ժամ	Հուլունքներ, թելեր, կոճակներ, ընդեղեն

		<ul style="list-style-type: none"> • առարկաների ձևի, չափսի, պատրաստված նյութի որոշման վերաբերյալ վարժություններ • Շոշափելիքը զարգացնող վարժություններ • Մարմնի դիրքն զգալուն ուղղված վարժություններ • Դեպի նպատակակետ ուղիղ հասնելուն, ուղիղ քայլքի զարգացմանն ուղղված վարժություններ • Հոտով, համով կողմնորոշման հմտությունների զարգացում: • Մնացորդային տեսողության առկայության պարագայում • 3-4 մետրից մարդկանց/խոշոր առարկաների հայտնաբերում • Խոշոր առարկաների շարժման ուղղության որոշում, Հետևել առարկաներին • Ուսուցանել, թե որտեղ կարող են գտնվել տեսանելի ցուցանակները կամ օրինակ ավտոբուսների դեղին բռնաձողերի տեղադրվածությունը և հայտնաբերումը 			<p>(ցորեն, բրինձ, ոսպ, սիսեռ, լոբի), վառ գունավորմամբ առարկաներ, կոնտրաստային գունավորմամբ նկարներ: Աշխատանքները կատարվում են շենքի ներսում:</p>
6	<p>Հասկացությունների, պատկերացումների ձևավորում</p>	<ul style="list-style-type: none"> • Տարբեր առարկաների (սար, մեքենա, կենդանիներ, փողոց, խաչմերուկ, երկրաչափական պատկերներ և այլն) պատրաստում ծեփոնով (պլաստիլին) • Ուղղության հասկացության ամրապնդում (ձախ, առջ, աջ և անկյունագծով առաջ, ձախ և անկյունագծով առաջ, աջ և ձախ կողք, հետ, աջ և հետ, ձախ և հետ) • Ծանոթացում ժամացույցին և Ժամացույցի մեթոդի ուսուցանում • Աշխարհագրական կողմերի գործածման ուսուցանում • Անվտանգ տեղաշարժվելու և վնասվածքներից պաշտպանության մեթոդների ուսուցանում • Չտեսնողներին ճիշտ և անվտանգ ուղեկցելու մեթոդների ուսուցանում • Շոշափական պարզ քարտեզների գծում 	3	1.5x3 =4.5 ժամ	<p>Պլաստիլին, շոշափելի թվերով ժամացույց, A4 ֆորմատի թղթեր, նկարչական հաստ թղթեր: Աշխատանքները կատարվում են շենքի ներսում:</p>

7	Առաջնային ծանոթացում սպիտակ ձեռնափայտին	<ul style="list-style-type: none"> • Ծանոթացում սպիտակ ձեռնափայտի տեսակներին • Դրա բռնվածքի ձևերին • գործածման մեթոդներին • ձեռքի ճիշտ դիրքի ուսուցանում և վարժությունների կատարում • սպիտակ ձեռնափայտի գործածման նախնական գիտելիքների տրամադրում 	1	1,5 ժամ	Ծրագրի մասնակցի հասակին համապատասխան սպիտակ ձեռնափայտ (սպիտակ ձեռնափայտը պետք է հասնի այն գործածող անձի կրծքավանդակի՝ ստամոքսից վեր գտնվող փոսիկին: Ցանկալի է լինեն ծալովի և ոչ ծալովի ձեռնափայտեր, որպեսզի մասնակիցն ինքն ընտրի, թե որ ձեռնափայտն է հարմար իր կողմից գործածման համար): Աշխատանքները կատարվում են շենքի ներսում:
8	Սպիտակ ձեռնափայտի գործածում	<ul style="list-style-type: none"> • Սպիտակ ձեռնափայտով խոչընդոտների որոնում և ուսումնասիրում • Իջնող աստիճանների վրա անվտանգ տեղաշարժվելու հմտություններ • Բարձրացող աստիճանների վրա անվտանգ տեղաշարժվելու հմտություններ • Բաց և փակ դռներով անցնելու անվտանգ կանոնների ուսուցում • Ձեռնափայտով հատակի ուսումնասիրման տեխնիկաների ուսուցում <p>Ձեռնափայտով տարածության ուսումնասիրման ուսուցում</p>	1	1.5 ժամ	Աշխատանքները կատարվում են շենքի ներսում
9	Աշխատանքներ դրսում	<ul style="list-style-type: none"> • Տեսնող ուղեկցի և չտեսնող մասնագետի հետ քայլել փողոցում, փորձել լսել միջավայրի ձայները, հարմարվել աղմուկին, և կատարել լսողական ընկալման զարգացման վարժություններ փողոցում: 	2	1,5x2 =3 ժամ	

10	Աշխատանքներ դրում	<ul style="list-style-type: none"> • Չայնային լուսացույցով կահավորված և առանց ձայնային լուսացույցի խաչմերուկների լսում և անվտանգ անցում: • Փողոցի ձայները աջ կամ ձախ կողմում թողնելով կողմնորոշման, խոչընդոտները ճիշտ և անվտանգ շրջանցելու և մայթով ուղիղ քայլքի ուսուցանում: 	1	1.5 ժամ	
11	Աշխատանքներ ծրագրի մասնակցի տան շրջակայքում	<ul style="list-style-type: none"> • Շենքի դիրքի, գլխավոր փողոցից շենք բերող և շենքից դուրս տանող 1 մուտքի/ելքի ուսուցանում • Շենքին մոտ կանգառի ուսուցանում (փողոցի երկու կողմերից) • Բնակության վայրին մոտ փողոցի անցման թույլատրելի ուսուցում: Եթե խաչմերուկ է, խաչմերուկի լսում և անցում այնքան, մինչև մասնակիցը վստահորեն կանցնի փողոցը: • Ուսուցանված տարածքի շոշափելի քարտեզի պատրաստում: 	3	1.5 x3 =4,5 ժամ	Թղթեր, ծեփոն: Պարապմունքների քանակը կախված է մասնակցի կարողություններից և ունակություններից:
12	Աշխատանքներ բնակավայրին մոտ	Շենքին մոտ խանութների, դեղատների և մասնակցի ցանկությամբ այլ օբյեկտների տեղակայման վայրի, մուտքի, ներսի կառուցվածքի ուսուցում և ուսուցանված տարածքի շոշափական քարտեզի պատրաստում:	3	1.5 x3 =4,5 ժամ	Թղթեր, ծեփոն: Պարապմունքների քանակը կախված է մասնակցի կարողություններից և ունակություններից:
13	Կարծրատիպերի կոտրում	<ul style="list-style-type: none"> • Նախորդ նյութի կրկնություն • շենք բերող և շենքից դուրս տանող երկրորդ/երրորդ/չորրորդ այլընտրանքային մուտքերի ուսուցանում • կարծրատիպերի կոտրման և հաղորդակցման հմտությունների հաստատման գործողություններ. • Խանութից միայնակ որևէ բան գնելու քաջալերում • Կանգառում ավտոբուսի համար հարցնելու աջակցության խնդրանք • Ավտոբուսում «այսինչ» կանգառ հասնելուն պես զգուշացման խնդրանք • Գումարը փոխանցելու խնդրանք և այլն: 	3	1.5 x3 =4,5 ժամ	Այս ընթացքում անհրաժեշտ է չտեսնողին հորդորել, որ <ul style="list-style-type: none"> • Անպայման զգուշացնի, որ ինքը չի տեսնում • Անընդհատ գործածի «ներողություն» և «շնորհակալություն» «կախարդական» բառերը

14	Այլ	Ծրագրի մասնակցի ցանկությամբ այլ տարածքների ուսուցանում՝ <ul style="list-style-type: none"> • Մետրո • Մշակութային հաստատություն • Աշխատանքի վայր • Բուժհաստատություն • Հասարակական նշանակության որևէ վայր կամ վայրեր 	X	X	X
----	-----	--	---	---	---

ՄՈՂՈՒԼ

Լիարժեք կյանք ՀԿ-ի կողմից իրականացվող «Տեսողության խնդիրներ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնում» ծրագր շրջանակներում համակարգչային հատուկ ծրագրերի ուսուցման ծառայությունների

I. **Նպատակը՝ ծրագրի մասնակցին** տրամադրել համակարգչի հետ աշխատելու առաջնային գիտելիքներ Էկրանի ընթերցող ծրագրի միջոցով, որպեսզի ուսանողները ծանոթանան համակարգչի սարքերին, համակարգչով տեքստ ձևավորելու նորանոր հնարավորություններին, ինչպես նաև կծանոթանան էլեկտրոնային աղյուսակների հետ աշխատանքին և դրանց օգնությամբ դիագրամների կառուցմանը, ինքնուրույն կօգտվեն համացանցից, մասնավորապես՝ սոցիալական կայքերից, իրավական, տեղեկատվական, հայտարարությունների և պետական գերատեսչական մարմինների թվայնացված ծառայությունների կայքերից:

II. Անհատական դասնթացի մոդուլի տևողությունը՝ 20 դասաժամ ընդհանուր 2,5 ամիս տևողությամբ, շաբաթական երկու օր:

III. Տրվող հիմնական հմտությունները՝

1. Ծանոթություն օպերացիոն համակարգերի, համակարգչի և ստեղնաշարի ուսուցում՝ 6 դասաժամ
2. Մենյունների և առաջնային ծրագրերի ուսուցում՝ 7 դասաժամ,
3. Համացանց (սոցկայքեր, իրավատեղեկատվական) և թվային կապի միջոցների ուսուցում՝ 7 դասաժամ:

IV. Դասընթացների ընթացքում ներառված նյութեր, հմտություններն ուսուցում.

1. Համակարգչի և օպերացիոն համակարգերի ծանոթություն
2. Էկրան ընթերցող ծրագրի օգնությունը և ստեղնաշարի հրաման կոճակներ
3. Ստեղնաշարի երկրորդ և երրորդ շարքերի կոճակներ
4. Ստեղնաշարի չորրորդ և հինգերորդ շարքերի կոճակներ
5. Մենյունները և կիրառման ձևերը
6. Թվային բլոկ
7. Էկրան ընթերցող ծրագրի մենյուն և կարգավորումները
8. Ֆայլ, ֆայլի ձևերը
9. Microsoft word թղթապանակ և տեքստի նավարկություն
10. Microsoft word տեքստի ձևավորում
11. Microsoft word աղյուսակների կառուցում և նավարկում
12. Microsoft excel էլեկտրոնային աղյուսակներ և ֆորմուլաների կառուցվածք
13. Mozilla, Google
14. Youtube
15. Էլեկտրոնային փոստ
16. Սոցիալական ցանցեր, Ֆեյսբուք
17. Աուդիո և էլեկտրոնային գրքեր
18. Տեղեկատվական և հայտարարությունների կայքեր և նավարկում
19. Իրավական կայքեր
20. Սկայպ

V. Մոդուլի կատարողական, արդյունքային ցուցանիշներ

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների **բավարար մակարդակի ապահովումն է:**

Այս մոդուլի իրականացումից հետո ծրագրի շահառուն պետք է.

1. Գիտակցի համակարգչի կարևորության և նրա անփոխարինելի դերը մարդու անկախ կյանք վարելու համար,

2. Ծանոթանա համակարգչի մասերին, իմանա ներմուծող և արտածող սարքերի, ինչպես նաև հիշող սարքերի մասին,
3. Կարողանա տեքստային փաստաթղթեր ներմուծի,
4. Microsoft Word-ի միջոցով խմբագրի աղյուսակներ,
5. Կարողանա աշխատել ունիվերսալ ստեղների հետ,
6. Կարողանա աշխատել էլեկտրոնային աղյուսակների հետ
7. Կարողանա օգտվել համացանցից՝ գտնել հետաքրքրող տեղեկատվությունը, աուդիո և էլեկտրոնային գրականության հասանելիությունը, տեղադրել և ընթերցել հայտարարություններ, ինչպես նաև օգտվել պետական թվայնացված ծառայություններից:

ՄՈՂՈՒՆ

Լիարժեք կյանք ՀԿ-ի կողմից իրականացվող «Տեսողության խնդիրներ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնում» ծրագրի շրջանակներում անկախ կյանքի հմտությունների սրամադրման **հոգեբանական ծառայությունների**

Սույն մոդուլի շրջանակներում ծրագրի մասնակիցներին մասնակցելու են անհատական և խմբային պարապմունքների՝ ստորև նշված նպատակներին հասնելու համար.

Հ/Հ	Հոգեբանական աջակցման տեսակը	Հոգեբանական աշխատանքի նպատակը	Այցելությունների և խմբային աշխատանքների հաճախականությունը	Աշխատանքի տևողությունը
1	անհատական	Սպիտակ ձեռնափայտի գործածման համար դրական հոգեբանական տրամադրվածության ձևավորում	շաբաթը 1 օր	1 ժամ
	խմբային	Անկախ կյանքի կարևորության, անկախ ապրելու, կենցաղավարելու հմտություններ ստանալուն անձին նախապատրաստելը	շաբաթը 2 օր	2 ժամ
2	անհատական	Ներանձնային խնդիրների հաղթահարում՝ աշխատանք վախերի, բարդությունների հետ, էմոցիոնալ լարվածության իջեցում	շաբաթը 1 օր	1 ժամ
3	անհատական	Ադեկվատ ինքնագնահատականի ձևավորում և ինքնավստահության ձեռքբերում:	շաբաթը 1 օր	1 ժամ
4	անհատական	Կամային հատկանիշների ուժեղացում	շաբաթը 1 օր	1 ժամ
5	անհատական	Անձի ուժեղ կողմերի վերհանում, դրանց վրա հիմնվելով ապագայի պլանավորում	շաբաթը 1 օր	1 ժամ
6	խմբային	Աշխատանք ուղղված միջանձնային փոխհարաբերությունների լավացմանը՝ ընտանիքում, ընկերական շրջապատում	շաբաթը 1 օր	2 ժամ
7	խմբային	Նոր միջավայրում շփման հմտությունների և կարողությունների ձևավորում	շաբաթը 1 օր	2 ժամ
8	խմբային	Ներանձնային կոնֆլիկտների հաղթահարում	շաբաթը 1 օր	2 ժամ

Այցելությունների էլեկտրոնային գրանցամատյան /ամսական/					
2021. ապրիլ					
	Ծառայություն ստացողի ԱԱՀ	Ծառայության տեսակ և փաստացի տրամադրման օրը			
		Ծառայություն 1	Ծառայություն 2	Ծառայություն 3	Ծառայություն 4
1		օրեր	օրեր	օրեր	օրեր
2		օրեր	օրեր	օրեր	օրեր
3		օրեր	օրեր	օրեր	օրեր
4		օրեր	օրեր	օրեր	օրեր
5		օրեր	օրեր	օրեր	օրեր
6		օրեր	օրեր	օրեր	օրեր
7		օրեր	օրեր	օրեր	օրեր
8		օրեր	օրեր	օրեր	օրեր
9		օրեր	օրեր	օրեր	օրեր
Մասնագետ(ներ)ի ստորագրությունը՝ ըստ ծառայության					
		Ստորագրություն	Ստորագրություն	Ստորագրություն	Ստորագրություն

Հուսանկարներ՝

